չում չէին հետեւում պարսիկներին, բացի մէկ բանից, որ իրենց կանանց խստօրէն փակուած էին պահում տանը: Ընդհակառակը, Ախալցըխայի շրջանում (Ախալքալաքը հետը) տաճիկները հայ ժողովրդի կենցաղի վրայ իրենց խոր դրոշմն էին դրել: Ամէն ոք, մինչեւ իսկ երեխաները, տաճկական տարազ ունէին, այնպէս որ շուկայում եւ փողոցում կարելի չէր քրիստոնեային զանազանել մահմեդականից: Միւս կողմից, սակայն, Ախալցխայի հայուհիները տղամարդկանցից այնպէս զատուած կեանք չէին վարում, ինչպէս նրանց քոյրերը՝ Երեւանում: Ախալքալաքում իմ անցկացրած մի քանի օրուան ընթացքում ես առիթ ունեցայ քսանից աւելի հայուհիներ տեսնելու՝ առանց քողի: Նրանք մեծ մասով գեղեցկադէմ էին եւ բարեկազմ»:

Քանի որ խօսք եղաւ հայ կնոջ մասին, յիշատակենք նաեւ հետեւեալ փաստը Բոդենշտէդտի դիտողութիւններից:

Հայ կնոջ փակուած, տղամարդկանցից հեռու կեանքը արձանագրելով, Բ. ասում է, որ այդ սովորութիւնը այնչափ արմատացած է եղել ժամանակի հայերի մէջ, անգամ տարիքաւոր կանանց վերաբերմամբ, որ Արովեանի նման լուսամիտ ու կրթուած, եւրոպականացած մարդը չի զլխիր իր գոնէ մօրը ծանօթացընել օտարական ճամբորդների հետ» («Ցուշեր», Ա. 296):

Այս յիշատակութիւնը մի կողմնակի փաստ է, ի միջի այլոց, որ Բոդենշտէդտ Քանաքեռ եւս այցելած պէտք է լինի, թէեւ նրա աշխատութիւնների մէջ ոեւէ ուղղակի ցուցմունք չենք գտնում այդ մասին: Գուցէ այդ տեղի է ունեցել Երեւանից Թիֆլիս վերադարձի միջոցին:

* * *

Իր «Կովկասի Ժողովուրդները» հատորի մէջ Բոդենշտէդտ մի առանձին հատուած է նուիրել հայերին, «Հայ Ցեղը» վերնագրով: Այդտեղ նա խօսք է անում ինչպէս հայ ցեղի, այնպէս եւ հայ աշխարհի մասին: Բոլոր ճամբորդների նման Բոդենշտէդտ եւս մատնանիշ է անում հայ ժողովրդի ցրուածութեան փաստը, որ եւ բացատրում է նրա պատմական ճակատագրով:

«Ինչպէս որ Իսրայէլի որդիները՝ ճակատագրից հալածուած՝ ցրուեցին աշխարհիս բոլոր ժողովուրդների մէջ — ասում է նա — ինչպէս որ նրանք օտար հողի վրայ ապրելով տեղացի դարձան, մինչ սեփական հայրենիքը օտար մնաց նրանց համար այն պատճառով, որ ուրացան Յիսուսին, նոյն անէծքը ծանրացաւ հայերի վրայ եւս, բայց այն պատճառով, որ նրանք պաշտեցին Յիսուսին ու հաւատարիմ մնացին նրան»:

Որչափ եւ չափազանցութիւն կայ վերի տողերի մէջ, որչափ եւ, բարեբախտաբար, փոքր չափով է միայն իրականութեան համապատասխանում հայ-հրեական զուգակշիռը, քանի որ ինչպէս այսօր, այնպէս եւ այն ժամանակները հայութեան հոծ հատուածը իր հայրենի հողին է կառչած, բայց եւ այնպէս անուշադրութեան մատնելու չէ նման դիտողութիւնները:

Հայերը — ասում է Բոդենշտէդտ — տարածուել են ցարերի պետութեան բոլոր մասերում: Մի քանի նահանգներում, ինչպէս օրինակ Կովկասում, նրանք իրենց ձեռքում են կենտրոնացրել առեւտուրը: Այսպէս, Պետերբուրգի եւ Մոսկուայի շուկաներում, ինչպէս նաեւ Նիժնի-Նովգորոտի տօնավաճառում կարելի է միշտ էլ տեսնել հայ վաճառականների ամբողջական քարվաններ՝ եկած Հաշտարխանից, Ղրիմից, Ղզլարից, Մոզտոկից, Դերբենտից, Թիֆլիսից: Թէպէտեւ նրանք ընդհանուր առումով իրենց նախահայրերի հաւատը, սովորոյթները եւ տարազը սրբութեամբ են պահպանում, բայց եւ այնպէս այդ պարագան չէ խանգարում, որ ժամանակի ընթացքում, յարաբերութեան մէջ լինելով օտար ժողովուրդների հետ, շատ բաներ փոխ առնեն սրանցից ու սեփականը, ազգայինը, կորցնեն՝ աւելի կամ պակաս չափով: Ամենից շատ այդ բանը դիտել կարելի է Պետերբուրգում, Մոսկուայում, Թիֆլիսում եւ Հաշտարխանում, ուր հարուստ ընտանիքներից շատերը բոլորովին ռուսական կեանքով են ապրում: Հետեւելով արդիական մոսկուացիներին, նրանք իրենց ազգային ճաշակաւոր տարազը զոհ են բերել ֆրանսիական խաթարուած տարազին:

Դարերով պարսիկների եւ տաճիկների ստրկացնող լծի տակ ապրելու հետեւանքով է, որ հայը զուրկ է մնացել ռազմական ոգուց: